ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

N 2679-Ա « 25 » մայիսի 2026թ.

Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.5/6 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ 279,0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԼԱ ՄԱՆԱՍԵՐՅԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՌԲԵՐՄԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Ալլա Մանասերյանի լ/ա Հասմիկ Մարտիրոսյանի դիմումը՝ Հ.Ավետիսյան փողոցի հ.5/6 հասցեին կից՝ 279,0քմ մակերեսով հողամասի նկատմամբ Ալլա Մանասերյանին օգտագործման իրավունքի ձեռբերման վաղեմության իրավունք և սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունք տրամադրելու մասին:

Երևան քաղաքի ՀՀ վարչական դատարանի 2022 թվականի ապրիլի 11-ին կայացրած և օրինական ուժի մեջ մտած ՎԴ/7598/05/21 վճռով՝ Երևանի քաղաքապետարանին պարտավորեցվել է Հ.Ավետիսյան փողոցի հ.5/6 հասցեին կից՝ 279,0քմ մակերեսով հողամասի նկատմամբ Ալլա Մանասերյանին տրամադրել օգտագործման իրավունքի ձեռբերման վաղեմության իրավունք և սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունք:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշումով հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գոտում:

Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի 2022 թվականի ապրիլի 11-ին կայացրած և օրինական ուժի մեջ մտած ՎԴ/7598/05/21 վճիռը.

1. Հ.Ավետիսյան փողոցի հ.5/6 հասցեին կից՝ 279,0քմ մակերեսով հողամասի նկատմամբ Ալլա Մանասերյանին տրամադրել օգտագործման իրավունքի ձեռբերման վաղեմության և սեփականության իրավունքով ձեռք բերելու նախապատվության իրավունք:

2. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի և Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի վրա:

4. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246